Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 11

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ հեռակա նիստի

ք. Երևան 29 նոյեմբեր 2021թ.

Ղեկավարվելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 24-ի N 01-Լ որոշմամբ, կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Սուրեն Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Մարատ Գրիգորյան	Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Բացակայում է՝	
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն և լրացումներ կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրին հաստատելու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ. Նահապետյան)

5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ. Նահապետյան)

6. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ:
(Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ. Նահապետյան)

Կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության ծրագիրը:

Կողմ 8, Դեմ 0

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Կողմ 8, Դեմ 0

3. Հավանություն տալ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն և լրացումներ կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին:

Կողմ 8, Դեմ 0

4. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Կողմ 8, Դեմ 0

5. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Կողմ 8, Դեմ 0

6. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների հաշվետվությունը:

Կողմ 8, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգի հարցերի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետի պարտականությունները
ժամանակավորապես կատարող (խորհրդի քարտուղար) _____Հ. Սիրունյան